ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 90

«06» 12 2018 թ. գ. Երևան

2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԼԻԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳԾՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի դեկտեմբերի 8-ի ՀՕ-Ն 224-Ն օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշման 16-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության դատախազությանը գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 1305-Ն որոշումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի «Փորձաքննությունների կատարման ծառայության նախահաշվային արժեքի մասին» N 79-Ն որոշումով, «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի «04. Փորձաքննությունների ծառայություններ» ծրագրով 2018 թվականի ընթացքում լրացուցիչ ձեռքբերվելիք փորձաքննությունների կատարման ծառայությունների դիմաց վճարելու նպատակով Հայաստանի Հանրապետության դատախազությանը հատկացված միջոցների հաշվին դատական փորձաքննությունների կատարման ծառայությունները ձեռք բերել Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի

«Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունից՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դատարաններից (քրեական գործերով) կամ քրեական հետապնդման մարմիններից ստացված համապատասխան փորձաքննություն նշանակելու մասին որոշումների հիման վրա:

2. Փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա նախահաշվային արժեքը՝ 2018 թվականի համար սահմանել 560 դրամ:

3. Հաստատել փորձաքննությունների կատարման ծառայությունների միավորի նախահաշվային արժեքը և 2018 թվականի ընթացքում լրացուցիչ ձեռքբերման ենթակա քանակն ըստ փորձաքննությունների տեսակների՝ համաձայն հավելվածի (կցվում է):

4. 2018 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում տվյալ ծրագրին լրացուցիչ հատկացումների ընդհանուր գումարի սահմաններում, անհրաժեշտության դեպքում փոփոխել սույն հրամանի հավելվածով սահմանված փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերման ենթակա քանակն ըստ փորձաքննությունների առանձին տեսակների, եթե Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դատարանների (քրեական գործերով) կամ քրեական հետապնդման մարմինների կողմից ըստ այդ տեսակների նշանակված փորձաքննությունների փաստացի քանակը չի համապատասխանի հավելվածով նախատեսվածին:

5.Սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 2-օրյա ժամկետում այն հրապարակել Հայաստանի Հանրապետության դատախազության պաշտոնական կայքէջում:

6. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

7.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, և դրա գործողությունը տարածվում է 2018 թվականի նոյեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
«____» դեկտեմբերի 2018թ
N հրամանի

2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՄԱՍԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՔԱՆԱԿՆ ԸՍՏ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ

Փորձաքննության տեսակի անվանումը	Միավորի նախահաշվային արժեքը /դրամ/	Քանակը /հատ/	Ընդամենը նախահաշվային արժեքը /հազ.դրամ/
Ձեռագրաբանական	25200	184	4636.8
Փաստաթղթաբանական	33600	191	6417.6
Հեղինակային	25200	0	0
Ֆոտոտեխնիկական	50400	2	100.7
Դիմանկարային	50400	35	1764
Տեսաձայնագրառման և աուդիոձայնագրառման	67200	126	8467.2
Հետքաբանական	25200	87	2192.4
Ձգաբանական	33600	22	739.2
Պայթյունատեխնիկական	50400	9	453.6
Նյութագիտական	33600	206	6921.5
Սննդային	33600	22	739.2
Կենսաբանական/հողագիտական/	33600	107	3595.2
Հրդեհատեխնիկական	50400	34	1713.6
Շինարարատեխնիկական	33600	74	2486.3
Ճանապարհատրանսպորտային պատահարների հանգամանքների	16800	52	873.6
Տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի	50400	3	151.2
Տրանսպորտային հետքաբանական	50400	59	2973.6
Տնտեսագիտական	100800	9	907.2
Ապրանքագիտական	16800	209	3511.2
Համակարգչատեխնիկական	84000	160	13440
Մշակութային արժեքների	67200	14	940.8
Հոգեբանական	85680	12	1028.2
Դատաբժշկական	69440	35	2430.4
Դատաքիմիական (թունաբանական)	11760	90	1058.4
Դատագենետիկական (ԴՆԹ-նույնականացման)	145600	0	0
Օդորոլոգիական (այդ թվում մարդու կողմից թողնված հոտային հետքերի)	33600	0	0
Ճարտարագիտատեխնիկական	84000	11	924
Լինգվիստիկական	85680	4	342.7
Էկոլոգիական	33600	13	436.8
Ընդամենը		1770	69245.3